

ՃԵՆԱՊՐԱՆԱԿԱՆԵՐ

ՎԱՏԱՆ ՄԱՂԱՅԱՆ

բանասիրական գիյր. թեկնածու

ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՏԵՐՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ

Անցյալի հայ գրական-մշակութային գործիչներից շարերը, որոնք ժամանակին լուրջ դեր են կատարել մեր հոգևոր կյանքի փառքեր ուրբարներում՝ նպաստելով նրա առաջընթացին ու հարստացմանը, գնալով աստիճանաբար անուշադրության են մտնում ու անցնում մոռացության գիրկը: Մինչդեռ նրանց կատարածը հաճախ դարձել է այն ամուր հիմնաքարը, որի վրա հետագայում բարձրացել է գիյրության փայլալ ճյուղը: Ներկա պարագայում խոսքը վերաբերում է Վահան Տերյանի կյանքի ու գործունեության առաջին ուսումնասիրողներից մեկին՝ Սաքո Սուքիասյանին, որը վիթխարի ներդրում ունի մեծ քնարերգակի կենսագրության անհայտ էջերը վերհանելու ու նրա ստեղծագործությունների մի զգալի մասը կորստից փրկելու գործում: Նրա ծառայություններն անուրանալի են նաև գեղարվեստական գրականության թարգմանության, ինչպես ու հայ-ռուսական գրական կապերի զարգացման ու ամրապնդման ասպարեզներում:

Այսօր անարդար կլիներ մեզանից կես դար առաջ կյանքից հեռացած երևելի գործչի անունն ու հիշատակը մոռացության քողի փակ թողնելը: Այդպիսի նվիրյալ անձանց անունները պետք է փոխանցել գալիք սերունդներին: Նույն նպատակն է հետապնդում մեր ներկա հոդվածը, որի մեջ առաջին անգամ¹ փորձ է արվում Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում պահվող² արխիվային հարուստ նյութերի հիման վրա ներկայացնելու Ս. Սուքիասյանի կյանքի հետաքրքիր ու ուսանելի էջերը:

Սաքո Սուքիասյանը ծնվել է 1896 թ. օգոստոսի 22-ին (հին փոմարտի) Ջավախքի կենտրոն Ախալքալախում, ճանաչված ոսկերիչ-արհեստագործ Գրիգոր Սուքիասյանի բազմանդամ ընտանիքում: Այդ մասին ու հետագայում իր ինքնակենսագրություններից

1 Ս. Սուքիասյանի մասին կենսագրական մի քանի փող ենք գրում միայն Վայկ խաչատրյանի «Գրական փողեկափու, 1934-1986 թթ.» գրքում (Երևան, 1986, էջ 522-523):

2 Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի Ս. Սուքիասյանի ֆոնդում պահվում է 1840 վավերագիր ու փաստաթուղթ, որոնք կազմում են 576 միավոր: Դրանք վերաբերում են նրա կենսագրության ու գրական-թարգմանչական բեղմնավոր գործունեությանը:

մեկում³ գրում է. «Ես ծնվել եմ մանր արհեստավորի ընտանիքում: Նայրս վաղ է գրկվել ծնողներից ու մնացել որբ: Նրան հայրաբար պահել ու դաստիարակել է պապիս եղբայրը՝ Նարուրը, ապա ես Կովել է ուսման ու արհեստի: Նայրս արհեստից բացի մանկությունից նաև նվագել էր սովորել լարային գործիքների վրա, լավ նվագում էր թառ ու քամանչա, մի բան, որ ավանդաբար ընդունված է եղել մեր մեծ գերդաստանում դեռևս իմ ծնվելուց շատ փաստամյակներ առաջ, մինչև Ջավախք գաղթելը: Իմ նախնիները Էրզրում քաղաքից են եղել՝ անվանի ոսկերիչներ, զինագործներ, նաև ունեցել են նվագելու շնորհք: Ես հակամեր եմ ենթադրելու, որ մեր արհեստավորական ունակությունները քոնսերվացիան են, իսկ սերը դեպի երաժշտությունը ահա սերնդեսերունդ փոխանցվելով՝ ամուր մնում է մեր հոգում: Առաջինը, ես կասեի, ձեռքբերովի է, սովորովի, որ ավանդաբար մեր գերդաստանում մեծից անցել է փոքրին: Սակայն երգելու ու նվագելու արվեստը, թվում է, բնաբուր ձիրք է, որ բոլորիս մոտ ի հայտ է եկել մանկությունից ու աստիճանաբար կարարելագործվել: Օրինակ՝ ես եմ եղբայրներից մեկը*, որը նկարիչ է, նույնպես լավ նվագում ենք լարային գործիքների վրա: Այդպիսի նվագողները մեր գավառական քաղաքում կոչվում էին սագանդարներ: Նորս նույնպես կոչում էին սագանդար:

Երաժշտական արվեստը նրան հնարավորություն էր Կովել դառնալ վարպետ սագանդար, հանդես գալ մեր փոքրիկ քաղաքի խրախճանքներում ու հարսանյաց հանդեսներում: Մի կողմից իր արհեստից եւ մյուս կողմից սագանդարությունից ձեռք բերվող միջոցներով հայրս կարողանում էր պահել իր հեքիզները մեծացող ընտանիքը: Ծնողներս գրագետ էին: Նայրս դպրոցում սովորել էր երկու տարի, իսկ մայրս՝ ավելի երկար: Մեր տանը շատ գրքեր կային: Նայրս կարդում էր Աբովյանի, Պոռշյանի, Պարկանյանի, Բաֆֆու, Ծերենցի, Ա. Ծափուրյանի, Նովի. Թումանյանի, Ն. Նալբաջյանի, Նովի. Նովհան-նիսյանի, Ավ. Իսահակյանի եւ այլոց սրելոճագործությունները: Նա աշուղական պոեզիայի մեծ սիրահար էր, պաշտում էր Սայաթ-Նովային ու Ջիվանուն եւ հաճախ էր թառի ու քամանչայի վրա նվագում ու կատարում նրանց երգերը: Նայրս մոտ էր նաև Վահան Տերյանին, որը մի քանի անգամ եղել է մեր տանը, ընկերակցում էր նրան:

Մայրս նույնպես գրագետ էր: Նա ավելի լավ գիտեր հայ գրականությունը, քան հայրս: Նա գրում էր նաև բանաստեղծություններ: Ես գիր եմ սովորել մորիցս: Նա է առաջին անգամ ինձ համար կարդացել Բիչեր Սթոունի «Քեռի Թոմի խրճիթը» արկածները⁴:

Ահա այսպիսի ջերմ ու արվեստասեր ընտանիքում է մեծացել Գրիգոր Մուքիասյանի անդրանիկ որդին՝ Սաթուր⁵: Ներազայում այդ ընտանիքում ծնվել են նաև նրա վեց եղբայրներն ու քույրերը: Նա իր նախնական կրթությունն ստացել է Ախալքալսկի Մեսրոպյան վարժարանում, որից հետո հաջողությամբ հանձնելով ընդունելության քննութ-

3 Ս. Մուքիասյանի ֆոնդում պահպանվող փաստաթղթերում կա ինքնակենսագրության երկու բնագիր, մեկը գրված է 1939-ի մարտի 29-ին, իսկ մյուսը՝ 1959 թ. մայիսի 10-ին:

* Այսօրվա խոսքը վերաբերում է իր կրթության եղբորը՝ Աշոտ Մուքիասյանին (1902-1976), որը հետագայում դառնում է նշանավոր գեղանկարիչ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ:

4 Տես Ե. Զարենցի անվան ԳԱԹՍ. Մուքիասյանի ֆոնդ, գործ 462, էջ 82-109:

** Մարտ Մուքիասյանի իսկական անունը փաստաթղթերում Մարգիս է գրանցված:

յունները, 1910 թ. դարձել է Էջմիածնի Գեորգյան ճեմարանի երրորդ դասարանի սան: Այսպեղ նա սովորել է յոթ տարի, հինգը՝ դպրոցական բաժնում, որն ավարտել է 1915 թ. ապրիլին «յոժ գովելի վարօք»: Այդ հինգ տարիների ընթացքում ճեմարանում նա անցել է 25 հանրակրթական ու մասնագիտական առարկաներ՝ դրանցից արժանանալով հիմնականում «լավ» ու «գերազանց» գնահատականների: Նշենք նաև, որ ճեմարանում նրա դասընկերն է եղել Անաստաս Միկոյանը: Այնուհետև երկու տարի՝ 1915-1917 թթ., Ս. Մուքիասյանն ուսանել է ճեմարանի հատուկ դասընթացներում՝ ստանալով լիարժեք միջնակարգ կրթություն՝ անցնելով մանկավարժություն, հոգեբանություն, ազգաբանություն, հնագիտություն, հին հայերեն, պատմություն և այլ բարձրագույն դասընթացներ:

1918 թ. ապրիլի 28-ին ականավոր հայագետ Գաբրիել Եպիսկոպոս Հովսեփյանի փեսայության օրոք և նրա ստորագրությամբ Ս. Մուքիասյանը ճեմարանի բարձրագույն դասընթացն ավարտելու առթիվ ստանում է վկայագիր, որը նրան իրավունք է տալիս զբաղվելու մանկավարժական աշխատանքով: Դա այն ժամանակ էր, երբ ռուսական զորքերը լքում էին Կովկասյան ռազմաճակատն ու անցնում Ռուսաստան: Այդ օրերին Ջավախքն իր կենտրոն Ախալքալակով, ինչպես և նրան սահմանակից Ախալցխան՝ իր շրջակայքով թուրքական հրոսակների կողմից ենթարկվել էին շրջափակման ու օկուպացիայի: Դրանից մի փոքր առաջ Մուքիասյանների ընտանիքն ունեցել էր մեծ կորուստ, վախճանվել էր նրանց մայրը: Իսկ բազմանդամ ընտանիքը հոր ուղեկցությամբ լեռներով ուղևորվ մի կերպ անցել է Բակուրիան, իսկ այնպեղից էլ մեծ դժվարություններով հասել Թիֆլիս:

Վրաստանն ապրում էր օրհասական ծանր պահեր: Պարսերագմը և դրա հետևանքով առաջացած համաճարակն ու սովը, հազարավոր փախստականներն ու գաղթականները, երկրում քիչորդ անօրինություններն ու վայրենի թողալվությունը, իշխանությունների՝ հայերի նկատմամբ ունեցած արելությունն ու անդարբեքությունը, ավերն ու թալանը ժողովրդին հասցրել էին ծայրաստիճան աղքատության ու հուսալքության: Նենց նույն օրերին (1919 թ.) Թիֆլիսում ավերվեցարի գոհ է դառնում Գրիգոր Մուքիասյանը՝ իր վեց փոքրահասակ երեխաներին խնամելու ու կերակրելու ծանր հոգսը թողնելով կյանքի շեմին նոր-նոր ուրբ դրած Սաքոյի ուսերին, որը մի կերպ մասնավոր պարսպամուկներով կարողանում էր սափար լինել իր որբ մնացած քույրերին ու եղբայրներին: Մի կարճ ժամանակ անց որպես բարրուղար Ս. Մուքիասյանն աշխատանքի է անցնում փախստականների կոմիտեում, ապա մաթեմատիկայի և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ է նշանակվում Թիֆլիսի՝ որբերի համար նախատեսված գիմնազիայում: Եւ այդ ծանր պայմաններում իր սրացած ճնշին աշխատավարձով կարողանում է մանկահասակ քույրերին ու եղբայրներին փրկելով, տալ կրթության ու արհեստների:

1921 թ. փետրվարի 25-ին ասպարեզից հեռանում են մենշևիկները և Վրաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Ս. Մուքիասյանի համար սկսվում է մի նոր կյանք: Նա 1923 թ. փետրվարի 1-ին էլ Մոսկվա, որպեղ ապրում ու աշխատում է մինչև իր կյանքի վերջը՝ երբեք չկորցնելով մայր Նայաստանից ու իր ծննդավայր Ախալքալակից: Ս. Մուքիասյանը Մոսկվայում իբրև թարգմանիչ աշխատել է մի շարք պետական

ու գերապեսզական հրապարակչություններում, որոնցից են, օրինակ, ՆԽՄՄ Պեպրիա-
րի մոսկովյան բաժանմունքը, ԽՍՀՄ ժողովրդական կից օրենքների հրապարակության
գործերի վարչության հայկական բաժանմունքը, որպեսզի նա պարբերաբար մասնակցում
է ԽՍՀՄ ղեկավարների ու որոշումների թարգմանության գործընթացին ընդհուպ մինչև
1931 թ. աշունը, ապա աշխատում է ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրապարակ-
չությունում և այլուր՝ կարարելով ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգ-
մանություններ:

Ս. Սուքիասյանը 1941 թ. ընդունվում է ԽՍՀՄ գրողների միություն և զգալի կազ-
մակերպչական աշխատանք է կատարում նրա մոսկովյան բաժանմունքում՝ ի շահ հայ
գրականության թարգմանության ու փարածման:

Նայրենական մեծ պարերագմը Ս. Սուքիասյանին գրում է Կովկասում, և նա որ-
պես թարգմանիչ ընդգրկվում է նորաստեղծ պաշտպանական գրադարակալություն-
ում: 1942 թ. հունիսին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի քարտուղարության կողմից ՆԿԿ
Կենտրոնին առաջարկվում է պարերագմական իրավիճակում քարոզչական նպարակ-
ներով հրապարակվող ռուսերեն «Տեղեկագիր» հանդեսի հայերեն փարբերակի համար
ներկայացնել խմբագիր-թարգմանչի թեկնածություն: Եւ այդ թեկնածուն լինում է Ս. Սու-
քիասյանը, որը հանդեսի խմբագրակազմի հետ մեկտեղ 1942 թ. մեկնում է Կույբիշեւ
քաղաք: Մինչև պարերագմի ավարտը այդ խումբը, նրա գլխավորությամբ, գործող
բանակի մարտիկների համար հայոց լեզվով հրապարակում է քարոզչական-հայրենա-
սիրական բնույթի գրականություն, թարգմանում հայ ժողովրդի բազմաթիվ դիմումներն
ու կոչերը՝ ուղղված փարբեր ռազմաճակարներում մարտնչող իր խիզախ զավակնե-
րին, ինչպես նաեւ, որպեսզի դրանց պարասխան, ռազմի դաշտից սրացվող հարյուրավոր
դիմումներն ու նամակները: Դրանք ժամանակին փարագրվել են հայկական և ռուսական
մամուլի էջերում:

Տարբեր լեզուներով լույս փնտռող այդ հանդեսի խմբագրությունները 1943 թ. կրկին
փրկափոխվում են Մոսկվա և այստեղ շարունակում իրենց գործունեությունը: Ս. Սու-
քիասյանը, որպես հայկական փարբերակի խմբագիր ու թարգմանիչ, աշխատում է
մինչև 1946 թ. մայիսի 1-ը, որից հետո իր խնդրանքով ազարվում է այդ պաշտոնից
և ամբողջությամբ նվիրվում գրական-սրբազորական ու թարգմանչական գործու-
նեության: Նա փարբեր փարիների համարեղության կարգով աշխատել է նաեւ ՆԽՄՄ
ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում իրեն գիտաշխատող և իր
մասնակցությունը բերել նրա գործունեությանը:

Ս. Սուքիասյանը վախճանվել է Մոսկվայում 1965 թ. հուլիսի 16-ին, և ըստ վաղօ-
րոք հայրենաճ ցանկության, աճյունը փրկափոխվել ու հողին է հանձնվել իր ծնողավայր
Ախալքալակի գերեզմանափանը:

* * *

Նշանավոր փրկյանագետ, արձակագիր ու թարգմանիչ Ս. Սուքիասյանը թողել է
գրական-թարգմանական հարուստ ժառանգություն: Նա գրական ասպարեզ է իջել
1920-ական թվականների վերջերից իրեն թարգմանիչ: Սկզբնական շրջանում նրա

նպատակն է եղել հայ գրողների լավագույն ստեղծագործությունները ժուռնալներին ներկայացնելը և դրա հետ մեկտեղ փորձեր է կատարել ժուռնալի հետադարձ կապի միջոցով հայերին հաջողություններ: Դեռևս Թիֆլիսում ուսուցիչ աշխատած Կարինյանին նա խորամուխ է լինում Լև Տոլստոյի և Ֆ. Մ. Դոստոևսկու ստեղծագործությունների մեջ և հրապարակում դրանց պարզությամբ ու խորությամբ և փորձում է դրանցից որոշ էջեր թարգմանել հայերեն: Այդ ընթացքում նա հայերեն է թարգմանում նաև Վսեվոլոդ Գարշինի «Չորս օրը» և Լեոնիդ Անդրեևի «Խավարը» պարմվածքները: Բայց հիշյալ հեղինակներից կատարած այդ թարգմանություններն ինչ-ինչ պարզամտությամբ այդպես էլ հերացայում չեն հրապարակվում:

Մոսկվա քաղաքի Կոմկոմբոյ հեղուկ 1932 թ. սկսած աստիճանաբար ընդլայնվում են Ս. Սուրիասյանի թարգմանական գործունեության շրջանակները: Առաջին անգամ նրա կատարած թարգմանությամբ լույս է տեսնում Մովսես Արագու «Կրակները» պարմվածքը («Կոմբոյ» հանդես, 1932, թ. 14): Դա առիթ է դառնում կենտրոնական «Գոսլիտիզդատի» հետ պայմանագիր կնքելու՝ նույն հեղինակի լավագույն պարմվածքների թարգմանության համար: Այդ ընթացքում հայ գրողների մի շարք պարմվածքներ նրա թարգմանությամբ տպագրվում են Թիֆլիսում լույս տեսնող «Լիտերատուրնոյե Զակավկաչե», «Նա ռուբեժե Վոստոկա» և մոսկովյան «Զնամյա» հանդեսներում, ուսանողական «Կուրսարմեյ» թերթի էջերում: Իսկ 1934 թ. աշնանը, ԽՍՀՄ գրողների առաջին համագումարի նախօրյակին, Ս. Սուրիասյանի թարգմանությամբ և մեծանուն գեղանկարիչ Մ. Սարյանի նկարազարդումներով լույս է տեսնում Մ. Արագու «Ընկեր պարմվածքներ» շքեղ ժողովածուն, որն ունենում է մեծ հաջողություն, համամիութենական և հանրապետական մամուլի էջերում երևում են մի շարք դրվատական գրախոսականներ: Այդ ժամանակից սկսած Ս. Սուրիասյանի թարգմանությամբ Մոսկվայում և Թիֆլիսում տպագրվում են դարձյալ Մ. Արագու «Նազարգլիանին» հեքիաթը (1935 թ.), Սյր. Զորյանի «Մի կյանքի պարմություն» վեպը (1936 թ.), նույն հեղինակի «Գայլի ձագը» պարմվածքը («Զմռան իրիկուն» ժողովածուում, Թիֆլիս, 1937) և այլ գործեր: Նրա թարգմանությամբ հայ հեղինակների մի շարք գործեր տպագրվել են նաև մոսկովյան «Լուդոմոսովնոյա լիտերատուրա» հանդեսում և այլուր:

Նախկապես մեծ են Ս. Սուրիասյանի ծառայությունները ժուռնալի հետադարձ կապի միջոցով հայերին թարգմանելու ասպարեզում: Այդ ուղղությամբ, ինչպես նշվեց վերը, նա իր առաջին քայլերը կատարել է 1920-ական թվականներին դեռևս Թիֆլիսում, սակայն տպագրվել սկսել է 1930-ականների կեսերից: 1936 թ. նրա թարգմանությամբ Երևանում, Պետհրատի կողմից լույս է ընծայվում Ա. Ս. Պուշկինի «Իրիջալին», ապա և «Կապիտանի աղջիկն» ու «Պուգաչովի պարմությունը», իսկ 1937-ին՝ «Պիկովայա դամա» («Ազոպ-աղջիկը»), «Պետրոս Մեծի արաբը», «Գորյուխինո գյուղի պարմությունը», «Եգիպտական գիշերներ» գործերը և այլն: Ներազայում նա թարգմանում է նաև ժուռնալի հետադարձ կապի միջոցով այլ գործեր, որոնք տպագրվում են ժուռնալի կողմից: Պուշկինի երևանյան թարգմանություններում:

Առաջին անգամ նրա թարգմանությամբ են հայերեն տպագրվել Նիկոլայ Օստրովսկու «Ինչպես էր կոչվում պողպատը» վեպը, Ալ. Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» երկը: Ն. Ն. Միկուլտ-Մակլայի «Ճանապարհորդությունները», Պ. Մանգելֆիլի «Բնագետի պարմածները», Մ. Գորկու «Չարլի Մենը» և «Երեքը», Ն. Նեկրասովի բանասերտությունների ու պոեմների մի մասը, Սվաբոպուկ Տուրեկի «Բոլորսարոյ» վիպակը և այլն: Նա թարգմանել է նաև ռուսագիր հայ գրող Վարդգես Թեոֆիլյանի «Կյանքը սկսվում է նորից» ծավալուն վեպը, որը լույս է տեսել Երևանում, Նայպերիարի կողմից, 1955-ին:

Երկրորդ աշխարհամարտի լարված օրերին, խմբագրական ծանր աշխատանքին գուցենթաց Ս. Սուքիասյանը կատարել է մի շարք հայրենասիրական երկերի հայերեն թարգմանությունները, որոնցից են՝ Ալ. Տոլստոյի «Ես արելության եմ կոչում», Ս. Ն. Սերգենի - Յենսկու սևաստրպայան պաշտպանությանը նվիրված «Արիություն և խիզախություն» երկերը, ինչպես և մեծանուն ասմունքող Ս. Բոգարյանի կազմած՝ Վիլյամ Շեքսպիրի «Նաուն հայրենիքի» գրական կոմպոզիցիան, որոնք լույս են տեսել Երևանում 1942 թվականին: Այս ամենի հետ մեկտեղ նրա արխիվներում պահպանվում են մի շարք թարգմանություններ, որոնք մնացել են անտպագրված: Դրանց թվում է նաև շուրջերկրյա նավարկությունների խիզախ հրամանարար, ռուս ծովագնաց ճանապարհորդ, ծովակալ Միխայիլ Պետրովիչ Լազարևի կյանքին ու գործունեությանը նվիրված գիրքը:

Սաքո Սուքիասյանը նաև գրող է, լավ արձակագիր: Նրա հարուստ արխիվի մի զգալի մասն են կազմում գեղարվեստական երկերը՝ գրված հայերեն և ռուսերեն: Նա սերտորեն է բազմաթիվ հաջողված պատմվածքներ, նորավեպեր, ակնարկներ, ճամփորդական նոթեր, ուղեգրություններ, հայրենագիտական աշխատություններ, ավանդություններ ու լեգենդներ, ինքնակենսագրական լայնածավալ մի կտավ, հուշագրություններ և այլն: Գրել է նաև մի վեպ՝ նվիրված 1918 թ. թուրքերի կողմից Ախալքալսկի ու Ախալցխայի պաշարման շրջանի անցքերին: Այն կրում է «Արյունոտ էջեր» վերաբերությունը և բաղկացած է չորս գրքից, յուրաքանչյուրը՝ շուրջ 200 մեքենագիր էջ ծավալով: Արժեքավոր են նրա Աբուլ լեռան վերելքին նվիրված ճամփորդական տպագրությունները, որ գրել է հայերեն, ապա և թարգմանել ռուսերեն, «Ուղեգնացություն» ճամփորդական նոթերը, «Մամսար լեռան ամեղձվածը» ավանդությունը և այլն: Ս. Սուքիասյանն ունի նաև պատմվածքների մի շարք՝ նվիրված ձիերին, նրանց վարքին ու մարդկանց նկատմամբ ունեցած հավատարմությանը: Դրանցից են, օրինակ, «Ազնիվ նծույզների վարքը», «Արաբական ձին», «Խորհրդավոր նծույզը», «Ճերմակ ձին», «Ոսկե նծույզը», «Ջիարշավ» և այլն: Պակաս հետաքրքիր չեն նաև նրա «Արևելյան ֆրագմենտները», Զավախքին ու նրա մարդկանց նվիրված նովելները («Բառքառ Գործը և բառքառ Թաթը», «Գիշերապահ Նակորը», «Գործըն ու Գեղուն», «Արջորս գինագործը», «Անտառի խորքում» և այլն):

Նիշտարակված սերտագործությունների մի մասը տպագրվել է ժամանակի մամուլի էջերում թե՛ Նայասարանում և թե՛ Ռուսաստանում: Սակայն անտիպներն ավելի մեծ թիվ են կազմում և սպասում են իրենց հրապարակողին:

Գրականագետ Ս. Սուրբխայանին շուրջ 30 տարի անընդհար գրադեցրել են իր հայրենակից Վահան Տերյանի կյանքի ու գործունեության չուսաբանված բազմաթիվ ու բազմապիսի խնդիրները: Միաժամանակ նա մտախոցվել է, որպեսզի ռուս գրական լայն շրջաններին ներկայացնի կյանքից անժամանակ հեռացած բանաստեղծի լավագույն ստեղծագործությունները, ապա՝ կորստից փրկի տարբեր անձանց մոտ գտնվող նրա ինքնագրերն ու նամակները և վերջապես Տերյանին մտերիմ ու ճանաչող ժամանակակիցներից հուշեր հավաքի ու պատրաստի մի առանձին ժողովածու:

Այդ նպատակով 1930-ական թվականներից սկսած մինչև իր կյանքի վերջը Ս. Սուրբխայանը հարյուրավոր նամակներ ու խնդրագրեր է ուղարկել աշխարհի տարբեր ծագերում ապրող նշանավոր ու «աննշան» մարդկանց, բանաստեղծի հարազատներին, մոտ ու հեռու բարեկամներին ու ընկերներին, հեռավոր ծանոթներին և խնդրել է բոլորին, որպեսզի այն նշխարները, որ բանաստեղծը ժամանակին նվիրել է իրենց և դրանք դեռ պահպանվում են, երբ վերադարձնեն՝ կենդանացնելու և Տերյանի երկերի լիակատար ժողովածուում օգտագործելու նպատակով: Այդ ճանապարհով Ս. Սուրբխայանը կարողացել է կորստից փրկել բանաստեղծի հարյուրավոր գրություններ ու նամակներ, ինչպես նաև առանձին ստեղծագործություններ:

Ս. Սուրբխայանի շնորհիվ է, որ այսօր Օրենբուրգում կանգուն է մնում այն տունը, որտեղ իր կյանքի վերջին օրերն է ապրել ու վախճանվել հայ մեծ քնարերգակը: Նա հայ առաջին մտավորականն էր, որ 1940 թ. ինքնակամ մեկնեց Օրենբուրգ՝ փնտրելու և գտնելու բանաստեղծի շիրիմը: Սակայն Վ. Տերյանի մահից արդեն անցել էր քսան տարի: Այդ ընթացքում շատ բան էր փոխվել Օրենբուրգում և նրա ծայրամասում գտնվող հայկական փոքրիկ գերեզմանատանը: Քաղաքը մոտեցել էր նրան և այն ընդգրկելով իր մեջ՝ գրեթե դարձրել էր անճանաչելի: Տերյանի շիրիմն այնտեղ այլևս հնարավոր չէր գտնել:

Սակայն Ս. Սուրբխայանն Օրենբուրգում (այն ժամանակ՝ Չկաով) փնտրեց և գտավ այն տունը, որտեղ 1920 թ. հունվարի 7-ին իր մահկանացուն էր կնքել թոբախտով ծանր հիվանդ բանաստեղծը՝ սերունդներին դառն պարգամ թողնելով հետևյալ տողերը.

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողե՛ք, որ լինեմ հեռավոր, մենակ,
Չզգամ, որ կա սեր, ե՛ր ցնորք, ե՛ր լաց...

Ս. Սուրբխայանն այնտեղ օրեր շարունակ, տասնյակ մարդկանց հանդիպելով ու հարցուփորձ անելով, մեծ դժվարություններով, մի կերպ է գտնում մի քանի հոգու, որոնց օգնությամբ ու աջակցությամբ կարողանում է գտնել Օհանյանների տունը, որտեղ, սակայն, վաղուց նրանցից ոչ ոք չէր մնացել: Նա Օրենբուրգում չի կարողանում տեսնել որևէ մեկին, որը մասնակցած լինե՛ր Տերյանի աճյունի հուղարկավորության սգո թափոթին, որ տեղի էր ունեցել դրանից 20 տարի առաջ, ճմռանը: Այն վայրը, որ թաղվել էր բանաստեղծի դին, գտնվել է քաղաքի արևելյան մասում, այն ժամանակ նրանից շուրջ

երկու կիլոմետր հեռու գտնվող գերեզմանապահ մի անկյունում, որը քաղաքային վարչության կողմից առանձնացված է եղել հայերի համար: Տերյանի շիրիմը, որը մի հասարակ քաղաքացի կամ խաչատարի մի ցուցանակ անգամ չի ունեցել, կորած է եղել հավիտյան, իսկ գերեզմանատունը՝ քանդված: Այնպեղ վաղուց կառուցվել էին շենքեր ու փողոցներ: Տերյանի շիրմի տեղը գտնվում մասին խոսք անգամ լինել չէր կարող: Ի դեպ, այսպեղ նշենք, որ 1980-ական թվականներին, մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի շնորհիվ, այդ վայրից մի բուռ հող բերվեց և իբրև աճյուն հողաբերկավորվեց Երևանի Կոմիտասի անունը կրող զբոսայգու Նա գրողների ու մշակույթի գործիչների Պանթեոնում՝ ստեղծելով Վահան Տերյանի «Նոգետը շիրիմը», որը հար պահված է լինում թաքն ծաղիկներով:

Տերյանի հայրենակցին ու նրա շիրիմը որոնողին այլևս ոչինչ չէր մնում անել, բան ձեռնարկի վերադառնալ բանաստեղծի վերջին հանգրվանը՝ Օհանյանների պարկառած տունը և պարզել այն սենյակը, որտեղ վախճանվել էր բանաստեղծը: Այդ ամենից հետո Ս. Սուքիասյանը Օրենբուրգում կատարել է մեկ այլ կարևոր առաքելություն ևս: Նա Չիչերինի փողոցի 42-րդ համարը կրող այդ տան մուտքին մարզային ղեկավար աշխատողների ու քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ, հանդիսավոր պայմաններում, փակցնել է փվել մարմարյա մի հուշարձանի, որի վրա հայերեն և ռուսերեն լեզուներով գրված է. «Այս տանը իր կյանքի վերջին օրերն է ապրել հայ բանաստեղծ Վահան Տերյանը. ՆամԿ/Բ/Կ և ՆամԿԳ/Կ անդամ»: Այդ ցուցանակը մնում է փվյալ տան մուտքին՝ որպես հուշ ու վկայություն Տերյանի Օրենբուրգում գտնվելու մասին:

Ս. Սուքիասյանն ամեն կերպ աշխատել է հավերժացնել իր հայրենակից մեծ բանաստեղծ, գրական-մշակութային և հասարակական-քաղաքական ականավոր գործիչ Վահան Տերյանի հիշատակը: Նա հայտնաբերել է բազմաթիվ արխիվային նյութեր, նամակներ, գրագրություններ, շրջել է բանաստեղծի հետքերով, եղել գրեթե բոլոր տերյանական վայրերում՝ նրա ծննդավայր Ջավախքի Գանձա գյուղից ու Ախալքալաքից մինչև Պնդերբուրգ ու Մոսկվա, ապա Նյուսիսային Կովկաս ու Աստրախան, Մոսկվայից մեկնել է Օրենբուրգ և այլուր: Նա այդ քաղաքներում որոնել ու գտել է բազմաթիվ մարդկանց, որոնք թեկուզև մեկ անգամ հանդիպել, առնչվել ու ճանաչել են բանաստեղծին, նամակագրական կապեր կամ գրույց են ունեցել նրա հետ:

Այս ամենի մասին Ս. Սուքիասյանը ռուսական ու հայկական մամուլում բազմաթիվ հոդվածներ է տպագրել, գրել է հեղափոխության հուշեր, վերհանել է նրա մանկության ու պատանեկության, ինչպես և ուսանողական տարիների, մոսկովյան ու պետերբուրգյան շրջանի գործունեության շարքը դրվագներ, մեծ վարպետությամբ ու արվեստով ռուսերեն է թարգմանել Տերյանի բանաստեղծությունների մի զգալի մասը և հրատարակել գրական մամուլում ու առանձին ժողովածուներում: Սրանից բացի, Ս. Սուքիասյանը գրել է «Էջեր Վահան Տերյանի կյանքից» (Երևան, Նայակոմիտ, 1859, 308 էջ) մեծագրությունը, որի մեջ ամփոփել է տերյանագիտության ուղղությամբ կատարած իր քառորդադարյա գործունեության արդյունքները: Այդ գիրքը մեծ բանաստեղծին նվիրված բազմաթիվ գրքերի

շարքում այսօր էլ կարող է սկզբնաղբյուրի դեր կատարել հայ քնարերգության վաղամեծիկ հանճարի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողների համար:

Ժամանակին այդ մեկագրությունը բարձր է գնահատվել հայ գրականագիտության կողմից: Դրա մասին առաջինը մի ծավալուն դրվագական գրախոսություն է տպագրել Պարույր Մուսկե⁵, որը լայն արձագանք է գտել գրական հասարակայնության շրջաններում: Պ. Մուսկեի այդ գրախոսությանը իր «Ամբողջ ձայնով» հոդվածով⁶ արձագանքել է Գուրգեն Մահարին: Այնուհետև Պ. Մուսկեի «Տերյանը պահանջում է» հոդվածի որոշ դրույթների դեմ հանդես է եկել գրականագետ Վաչե Պարպիզունին⁷: Այս ամենով ևս իրենց թեր ու դեմ կարծիքներով հանդերձ, բոլորն էլ բարձր են գնահատել Ս. Սուրբխաչյանի կատարած աշխատանքը ևս նրա այդ գիրքը համարել արեյանագիտության կարևոր նվաճում:

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրությունները Էջմիածնի ճեմարանի երբեմնի շրջանավարտ, գրող, թարգմանիչ ու գրականագետ Սաթո Սուրբխաչյանի մասին, կարող ենք ասել, որ նա իր գրական-թարգմանչական երկարամյա գործունեության ընթացքում լուրջ ներդրում է կատարել հայ թարգմանական գրականության ասպարեզում: Ուշագրավ են նաև նրա ինքնուրույն սրելծագործությունները, որոնք ունեն գեղարվեստական ակնհայտ արժեք և ճանաչողական նշանակություն: Եւ այս ամենի հետ մեկտեղ նա, որպես գրականագետ, արեյանագիտության մեջ կատարել է լուրջ ներդրում ևս իրավամբ պետք է համարվի այդ ասպարեզի առաջին երախտավորներից մեկը:

Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահապանվող՝ Ս. Սուրբխաչյանի հարուստ արխիվի հիման վրա կարելի է հրապարակության պարբերական մի ժողովածու, որը այդ նշանավոր մարդու ու մրավորականի հիշատակը հավերժացնելու լավագույն միջոց կհանդիսանա:

5 Տե՛ս «Գրական թերթ», 13 մայիսի 1960, տե՛ս նաև **Պարույր Մուսկե**, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, «Հայաստան» հրատ., 1974, էջ 57-74:

6 Տե՛ս «Գրական թերթ», 20 մայիսի 1960:

7 Տե՛ս անդ, 27 մայիսի 1960: